

ՆԵՐՍԵՍ ԱԶ ՈՐՍԿԱՆՁԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՉԱԼՈՒ «ՅԻՍՈՒՄ ՈՐԴԻ» ՊՈԵՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ

1152 թվականին «Բան հաւատոյ» պոեմից հետո Ներսես Ծնորհալին գրում է 4 հազար տողից բաղկացած «Տեառն Ներսէսի ճուէր մաղյանաց Անքչափական տաղիւ տոտողին բանից ըղձումն աղօթից Անքանձնական հոգուց զարթուցելոց մտօք ի թմբրուցենէ կորից յիշատակաւ անցելուն իրի, Անքայի և ապագայի, ողբումն հեծութեան սրտի խօսք ընդ Աստուծոյ» Վերնագրով պոեմը, որ հայտնի է «Յիսուս Որդի» խորագրով:

Համաձայն ուսումնասիրողների այն կարծիքի, թե՝ «Բան հաւատոյ» երկը իր թեմայով, բովանդակությամբ ու ձևով «իրեն՝ հեղինակին, երկի չի բավարարել», և «Մի ամբողջ տարի՝ նա որոնումներ կատարելուց հետո ստեղծագործության թեմա է Ծնորում Հին ու Նոր Կտակարանների համեմատաբար շատ լայն բովանդակությունը»¹, «Բան հաւատոյ»-ն դիտվել է իբրև «Յիսուս Որդի»-ի նախնական տարրերակ: Մինչդեռ այս ստեղծագործությունները տարրեր են իրենց նպատակադրումներով և հասցեագրված են տարրեր լսարանների: «Բան հաւատոյ»-ն ուսուցողական պոեմ է, որի նպատակն է ընթերցողին ծանոթացնել Ավետարանի բովանդակությանը, «Յիսուս Որդի»-ն, Ծանաշյանի ձևակերպմամբ, «կու գայ հոգեկան ապրումներէն, մարդկային զգացողութիւններէն, մեղքի եւ ցափի մէջ տառապող մարդու մը անձկութիւններէն, փարելով աստուածային շնորհքէն կաթող լոյսին և վերականգնող օգործեան»²:

Հստ Մ. Ավդալբեզզյանի Ծնորհալին «Յիսուս Որդի»-ն ևս գրել է՝ ելնելով մանկավարժական մկատառումներից: Այն «կանոնական գրքերի հենքի վրա հյուաված ստեղծագործություն է, որ նպատակ ունի ամրապնդել Հին ու Նոր Կտակարանների էական դրվագներն ընթերցողի մեջ, հստակել այլարանություններն ու տպավորել մատչելի մեկնություններով»³: Նրան համակարծիք է Ա. Մարտոյանը: Նա գրում է. «Ծնորհալու երկը ուսուցողական նպատակներ է հետապնդել»⁴: Վկայակոչելով այն հանգամանքը, որ երկը երգվող հատվածներ է ունեցել, նա ընդգծում է, որ «դա ևս պիտի նպաստեր գրա պյութի ընկալելի, մատչելի լինելուն»⁵:

Անշուշտ, Ծնորհալու «Յիսուս Որդի»-ն ունի ուսումնակրթական նպատակադրում, ինչպես և նրա ողջ ստեղծագործությունը: Սակայն «Յիսուս Որդի»-ն փիլիսոփայական խորքով, զաղափարական լայն ընդգրկումներով բազմաշերտ ստեղծագործություն է, իսկ

¹ Մանուկ Աքենյան, Երևան, հ. Դ., Երևան, 1970, լ. 119:

² Գր. Դակորյան, Ներսես Ծնորհալի, Երևան, 1964, լ. 141:

³ «Բազմավլ.ար», 1974, N 3-4, լ. 380:

⁴ «Ներսես Ծնորհալի (Ռողկածների ժողովածու)», Երևան, 1977, լ. 53:

⁵ Ա. Մարտոյան, Միջնադարյան հայկական պրեմը (ԺԱ-ԺԶ դարեր), Երևան, 1985, լ. 160:

⁶ Նույն գլուխում, լ. 160:

«Բան հաստոյ»-ն քրիստոնեական վարդապետության յուրօրինակ դասագիրը է, որը բանաստեղծական երևակայությունը միտումնավոր ստորադասվում է մտցի պարզությանը: Ծնորհալին հասուակ է ձևակերպել իր նապատակը.

*Փոքը բանի կարճ ի կարճոյ
Միայն զգմիտուրն ցուցելոյ,
Հնարքողուած վերծանելոյ
Արագ մշտացըն հասելոյ⁷:*

«Յիսոս Որդի»-ն գրված է Հին ու Նոր Կոտակարաններին քաջածանութ ընթերցողի համար: Դրա վկայությունն է նաև այն, որ Ծնորհալին, բացառությամբ Բիշատակարանի, երկը գրել է ին հաճգով, իսկ նա ստվորաբար միահանգություն է նախընտրում այն դեպքերում, երբ ստեղծագործությունը հասցեագորում է լուրջ, գիտակից ընթերցողին:

Երկի ծրագրի, նապատակի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Հատ Ալիշանի՝ «Այս գրուածին թելադիր և պատճառ՝ որչափ ալ ժամանակակցաց և մեր լետազայից օգուտ էր և լիշատակ՝ իր հարազատաց և ցեղին, որոց կը նուիրէ զսա մեղմակն աւելի իմն գորովանօք քան զայլ քերդուածան, (որոց մէջ երկարութեամբն ալ առաջին է), այլ բուն շարժիչ իմքնին իրեն խորազգած բաղդանքն և սիրտն է, մանաւանդ թէ շնորհազարդ սրտին շարժող Ս. Հոգին»⁸: Արելյանի բնորոշմամբ՝ նապատակն է «Մարդկային զանազան վիճակների մասին պատմվածքների մեջ՝ «Աստծու հետ խոսը»⁹: Մադոյանի կարծիքով՝ «Գրվածքի նպատակն է եղել՝ մարդկանց զգաստացնել, նրանց մեջ արթնացնել աստվածային սերը, որ տրված է բնությունից»¹⁰, ըստ Քիպարյանի՝ «կը դիմէ Աստուծոյ՝ հայցելու իր գթութիւնը եւ սէրը, որպէսզի փրկուի անկումներէ ու կը փորձէ ալ բարձրանալ դէպի Աստուծո»¹¹:

Աջուշտ, երկի հիմքում ընկած է խոստվանելու, ապաշխարելու ճանապարհով Աստծու ողորմածությանն արժանանալու գաղափարը: Բանաստեղծը խնդրում է Աստծուն օգնել իրեն, բուժել, փրկել, արժանի դարձնել երկնային արքայությանը: Երկն ունի ընդհանրացունող նշանակություն: Ստեղծագործությունը բովանդակում է աշխարհի արաշչագործությունից մինչև վերջին դատաստանի օրվա պատմությունը, այլ կերպ ասած՝ մարդկության անցյալը, ներկան և ապազամ՝ ըստ քրիստոնեական պատկերացումների: Այս մտահղացումը խոր իմաստ ունի իր մեջ. մարդու էությունը, սկսած Ադամից, դարեր շարունակ չի փոխվել. Առ հակված է դեպի չարը, դեպի երկրային վայելքները: Եվ բանաստեղծը համեստ է զայիս իբրև ողջ մարդկության մեղքի ու հանցանքի, հուզի ու տագնապի կրող, հայցում է Աստծու գթությունը ոչ միայն իր, այլև բոլորի փրկության համար: Պատմեղով աստվածաշնչական այս կամ այն դրվագը՝ Ծնորհալին ի ցուց է դնում թե՛ դրվատեղին, թե՛

⁷ Ներսես Շնորհալի, Թանք չափա, Բ դպ., Վեննդիկ, 1928, լզ 243:

⁸ Ղ. Ալիշան, Ծնորհալի և պարագայ իր, Վեննդիկ, 1873, լզ 239:

⁹ Մանուկ Արևոյան, Խշվ. աշխ., լզ 124:

¹⁰ Ա. Մագրոյան, Խշվ. աշխ., լզ 40:

¹¹ Կիւրեն Քիպարյան, Պարմութիսն հայ հին գրականութեան, Վեննդիկ, 1992, լզ 386:

պարսավելին. Առ հետամուտ է ընթերցողի բարոյակրթմանը, ուստի պատվիրում է.

*Քաջ իմանալ զիմաստ բանին,
Որ ամբարեալ կան ի սոսի՛^{12:}*

Քերթվածի Բիշատակարանում Ծնորհալին մի շարք խնդիրների հետ մեկտեղ հանգամանորեն անդրադառնում է նաև իր երկի նպատակին: Հստ նրա՝

*Սոյնպէս և ես յայս յարակայ
Զայս մաղթանաց բան խօսեցայ,
Թէպէտ և ոչ յիս ազդէ սա,
Սակայն արթնոց մաքրիչ մընայ^{13:}*

Ծնորհալին խորապես համոզված է, որ բանաստեղծությունը իր հուզական լիցքով կառող է ազդել ընթերցողի վրա.

*Զմիտս անմաքուրս աշխարհական,
Որ ըստ ծովու պէճաց ծրիման,
Սա՛ վերբերէ հրոյ մըման,
Որպէս բնութիւնն է վերնական:
Զանձն ըզգածեալ և հոգեկան
ի պատճառէ ինչ տըրտմական,
Սա՛ մերգործէ ուրախական
ի թախծութեանցըն հիւթական:
Եւ որք արքեալ են թըմրրական,
Հմպողք գիւնոյն յիմարական,
Սովաւ զարժնուն և զգաստանան,
Թէ՛ ըմթենմուն մըտառական:
Որք Աստուծոյ տեսոյն բաղձան,
Գերագումին լուսոյն ցանկան,
Սորին թևօք վերասլանան,
Մերձին ի տիպն ամտեսական^{14:}*

Ահա թէ ինչու Ծնորհալին զուր չէ համարում իր չարչարանքը՝ «Գլորել չափով ըզբանս ի սմա»^{15:}

Երկը ծրագրելիս Ծնորհալին հետապնդել է մեկ այլ նպատակ. Առ հուս է փայփայում,

¹² Ներսես Շնորհալի, Վիսուս Որդի, Երևան, «Ապոլոն», 1991, էջ 212:

¹³ Նոյն փեղում, էջ 218:

¹⁴ Նոյն փեղում, էջ 214, 216:

¹⁵ Նոյն փեղում, էջ 216:

որ այդ գրքով չի մոռացվի թե՛ իր, թե՛ իր հարազատների հիշատակը.

Համարեսցիս միշտ ընդ նոսին
Զիս ըզ Ներսէս մաղթել սովին:
Եւ առ հոգիս իմ յաւանդին
Եւ ի մարսինս ի տապաճին¹⁶.

Հենց այս միտումով էլ նա քերթվածի վերջում հիշատակում է իրեն հարազատ մարդկանց անունները:

* * *

«Յիսուս Որդի»-ն բաժանված է երեք գրքի: Ա. Մարդոյանը համակարծիք է Պ. Ֆեստերի ներթարությանը, որ բաժանումը Բեղինակինը չէ, բայց և ընդունում է, որ «առհասարակ քերթվածը Ակատելիորեն երեք մեծ հատվածից է բաղկացած, որոնցից առաջինը Ավիրված է Հին Կտակարանին, երկրորդում ավելի շատ նոր Կտակարանն է առկոչվում, երրորդը, ուր Բեղինակի ստեղծագործական տարերքն ավելի զգալի է, վերաբերում է վերջին դատաստանին»¹⁷: Իրոք, կառուցվածքային Ամամատիա բաժանումը չի վճարում երկի բովանդակության, իմաստի ճիշտ ըմբռնմանը: Իսկ ընդհանրապես՝ Ծնորհալին նյութը տվել է առանց հատվածաբաժանումների, միահար: Նա Աստվածաշնչից ընտրում է այս կամ այն դրվագը, ավետարանական այս կամ այն առակը, դեպքը, իրադարձությունը, հիշում աստվածային այս կամ այն պատվիրանը՝ եղելով իր գաղափարական-գեղագիտական սկզբունքից:

Քերթվածում Ծնորհալին դիմում է իր սիրած գրական հնարանքին՝ դիմառնությանը, որի շնորհիվ անմիջական կապ է ատեղծվում ընթերցողի և Բեղինակի միջև, և առաջանում է կնճանահ հաղորդակցության ջերմություն և մտերմություն:

Խոստովանությունը դառնում է երկի հիմնական մոտիվներից մեկը: Քերթվածի հենց առաջին էջերում բանաստեղծ խոստովանում է, որ Ժխտել է Տիրոց պատվիրանը, վատ-թել է նրա ունեցվածքը, անարգել է նրա պատիվը, մասն է դարձել Աղամի և Եվայի գործած մեղքի և կապվել է մեղքի կապով, թեն շատերն են քարոզել մարդուն սպանող մեղքերի մասին: Ավագանում հազար պատմումներ դեռ է Ժխտել և չարից խարված՝ մաշկեղեն հաներդ հազգել: Նմանվել է Կայենին, միայն թե իր եղբորն սպանելու փոխարեն կամովին սպանել է իր հոգին: Ենուս Զահարակն ու Ենովքի Աման Բուապու, հավատալու, մտքով երկինք վերաբարու փոխարեն նմկել է խոնավ ու գեղ տղմի գուբը և բանտարկված մնացել վիրերում, ինչպես հին դարերում՝ Նոյի ժամանակ ապրող մարդիկ, «Որք ուտէին և ըմպէ-ին, / Ազասնաբար խառնակէին» (Եշ 20):

Ավելին՝ եղել է կրող չար անորի հոգով և մտքով, որովհետև Բետևել է նրանց, ովքեր բարելունում աշտարակ էին կառուցում նոր չընելեղից փրկվելու կամ էլ Աստծուն հասնե-

¹⁶ Նոյն գրելում, լ. 212:

¹⁷ Ա. Մարդոյան, Եղի. աշխ., լ. 42:

լու համար: Ինքն էլ, համակված մեծամտությամբ ու գոռողությամբ, մեղքի բոլորի շուրջը պարհապես է բարձրացրել, սատանայի օգնությամբ հապատությամբ շարել գոռ ամբարտակի քարերը: Եսավի Աման ծննդած լինելով առաջինը՝ հոգով վերջինն է դարձել, որովհետև Գրա Աման անգին զանձը վաճառել է հանուն իր որովանի հագեցման և կամովին եղծանել երկնից տրված գիրն անդրանիկի:

Զուգահեռմերը, համեմատություններն ու հակադրությունները, որոնց դիմում է Ծնորհալին, ներոսի հոգեկերն ու խոհերը միահյուսում են պատումն՝ բացահայտելով Արա Աւրաշխարիը, հոգեկան ապրումները: Զնապորվում է տառապող մարդը, որ տարրութերվում է կասկածմերից, չունի հոգեկան համգաստություն («Ուստի շըրջիմ երերազի, /Միտք և խորհուրդը իմ տատանին» (Էջ 18), ցավազին տանջվում է չերևացող խորհուրդներից: Մերթ մահագուց քունն է պատում Արան, մերթ այսահար լուսնուի հետ այրվում է ցաման հրում, մերթ անհնարին անդրոններն են պաշարում հոգին:

Խորապես անկեղծ ու գեղեցիկ է Ծնորհալու խոստովանությունը: Իր անգո գոյության ողերգական գիտակցությունը ցավով է լցնում հոգին, ու ներսում լեռնացած ալդ ցավից են ծնվում բառերը, հոգեցունց պատկերները: Նա խոստովանում է մեղքերը այնքան բարեխղճորեն, այնքան մանրակրկիտ, որ թվում է, թե յուրաքանչյուր խոստովանություն, արցունքի յուրաքանչյուր կաթիլ մոտեցնում է Արան դեպի երկինք ձգվող լուսակազմ սահմանադրին: Բազում են մեղքերը, որովհետև փակել է հոգու աչքի թիրը և խցել ականջները Աստծու խոսքի առջև, բարու առաջ կարկամ է եղել, չի մերել պարտապանին, չի հոգացել քաղցածների, մերկերի, տնամկների կարիքները, օտար հյուրին օթևան չի տվել, չի այցելել հիվանդին, Վշտացողին տրտմակից չի եղել և նախանձով վառված՝ ուրախացողի հետ չի խնդացել և այսպես շարունակ¹⁸:

Խոստովանությունը, սակայն, չի վանում բանաստեղծի հոգուց անհուսության խավարը, ավելին՝ խորանում է ողերգությունն այն գիտակցությունից, որ իր թիկունքում, իր մեջ գործում է աներևությունը մի ուժ, որ շարունակ իրեն մղում է դեպի մեղքը: Ինչպես էլ բանաստեղծը որակի Արան՝ նենգավոր, մեղիչ, մարդախողիսող բռնակալ, հոգու թշնամի, անզգամ, օծ, խավարի աշխարհակալ, այդ ուժը նոյն ինքն է՝ սատանան, որ շարունակ մարդուն զգացնել է տալիս իր մերկայությունը: Այդ նա է իր գաղտնաձիգ նետերով խոցում մարդու հոգին, խորտակում մարդու սրտի հավատը: Նրա կերպարը թանձրանում, որոշակիանում է բոլոր այն արարքներում, որ գործում է մարդը: Բանաստեղծն իր ամբողջ ուժով ծառանում է սատանայի դեմ, փորձում պատերազմել, սակայն մարտադաշտում թուլանում է, և չարի նետերը շարունակում են խոցել իր տիրասեր սիրտը:

Առաջ է գալիս հոգու և մարմնի այն հակադրությունը, որը հոգել է միշնադարի բոլոր հեղինակներին: Վերլուծելով իր անցած ուղին՝ բանաստեղծն ըմբռնում է, որ ինքն է հյուսել իր ճակատագիրը, ինքն է մեղավոր իր անկման համար:

Զորեւ է սատանան. Նա կարող է մարդու հոգին բանտարկել խոր զնդանում, սակայն մարդն ինքն է թույլ տալիս, որ նա բնակվի իր մեջ. մարմինը, իբրև կացարան, պատշաճ հարդարում ու հարմարավեստ է դարձնում օձի համար և իր կամքով հայտնվում վիրում:

¹⁸ Նույն գլուխում, լ. 90 :

Աստված մարդուն ստեղծել է ալման, որ մարմինը լինի հոգու ծառան.

*Որպէս կարգեալ է Արարչի՛՛¹⁹
Հոգոյ ծառայ լիմել մարմահի՛՛²⁰:*

Մարդը, սակայն, մարմնավորով տարված, մեոցնում է հոգին մարմնում, մեղքեր գործում ի սեր երկրանյութի.

*Վասն աշխարհի ազարակի՛՛
Եւ վասն եղանց զգայակամի՛՛
Եւ ընդ կը մոց հեշտափիրի՛՛
Որով կապեալ կա ի սոսի՛՛²¹:*

Ծիշտ ալդան էլ մեկ դար անց Ֆրիկն է խոստովանում, որ մեղքեր է գործել հանուն աշխարհի սիրո.

Մարմինս սիրեց զաշխարհս, ի մորոյ ես մեղք գործեցի...²²:

Չորրու են ցանկությունները: Ֆրիկը պատկերավոր է Աերկայացնում հոգու և մարմնի կորիվը.

*Զանցի՝ թէ զհոգիս սիրեմ, Աա՛յ, մարմինս
հանց կու տայ խափ,
Զինչ որ խոյանայ քազան ու կաքաւըն
առնու ի յափ²³:*

Նույնական էր հոգու և մարմնի փոխարաբերության շնորհալիական ըմբռնումը: Քերթվածի հերոսը գոչում է.

*Սեոցին անդամք իմ երկրայի՛՛,
Կեցցէ հոգիս իմ վերջաստիմ²⁴:*

Բանականությունը հուշում է, որ մարմին կարելի է հայթել միայն հոգին նախընտրելով, սակայն համեմատությունները ծովի խորքում տարութերվող բեկված նավի կամ էլ աշնան

¹⁹ «Վիսուս Որդի», էջ 146:

²⁰ Նոյն գլուխում, էջ 118:

²¹ Ֆրիկ, Դիւն, ի լոյս ընծանց առաջին անգամ ամրողական քնազրով, ուսումնաշիրութնամբ, ծանօթութիններով, յակուածներով և բատարանով Տիրայր արքայի կողապատճենութեանը, Նի Եորբ, 1952, էջ 364:

²² Նոյն գլուխում, էջ 484-485:

²³ «Վիսուս Որդի», էջ 50:

հողմահար խոիվ խոտի թես ի ցուց են դնում հեղոսի հոգում տեղի ունեցող պայքարը։ Մարդն իր աղամալին բռությամբ ու մարմնով ձգվում է դեպի անցավորը՝ խորացմելով անջրպետը իր և Աստծու միջև։

*Հնդ մեծատան փափկասիրին
Ես փափկացայ յառօրէին
Մարմնովս այսու անասմալին
Ի փափկութիւն ամըզգամին²⁴.*

Դրաման սրվում է, որովհետև մարդն անհագ է իր ցամկություններում։

*Ի յարածել խոզերամին
Չազին մեղօք քաղցր եղերին²⁵.*

Հերոսի բարոյական նկարագիրը բացահայտվում է լիովին։ Նա հոգեապես թույլ, տկար, կամազուրկ էակ է, անզոր ըմրդիմամալու Սատանային։ Այդ պայքարում նրա միակ ապավենը մնում է Հիսուսը։ Բանատեղծն ամբողջ հոգով փարվում է նրան, որ առ զորեղացնի իրեն, մաքրի հոգին. այն ամենից, ինչ աննշան է ու չնշին։ Փորձում է աղոթքով հաղորդակից դառնալ Աստծուն, պահըն ճնշել մարմինը, արտաստրեներով համզցնել իր մեջ բորբոքված հուրը, վառել աստվածային լուսը։ Զղջան արցունքներով աղերսում է գթապրտություն, որովհետև միայն նա՝ Աստված, կարող է իրեն մաքառելու ուժ տալ, ընդդիմանալու կամք ու իմաստություն։

*Այլ տուր աստէն զղջումն անձին,
Ապաշաւել, զոր գործեցին։
Հնդ լըդփութեան որովայնին,
Դահօք ճնշել զգաստուար մարմին²⁶.*

Ստեղծագործության առանցքային խնդիրներից մեկը դառնում է մարդու գոյության իմաստի, մարդու ճակատագրի առեղծվածը։ Ծնորհալին արտահայտում է այն միտքը, որ երկրային կյանքը տրված է մարդուն իրոն փորձություն։ Աստված ոչնչից ատեղծում է աշխարհը՝ «Կենդանականք, որը բուսանին», «Եւ անկենդանք, որը ոչ շարժին»՝ իր արարչագործության բարձրագույն արժեք դարձնելով մարդուն։ Աստված շնորհում է մարդուն իր արքայական պատկերը, տալիս խոսքի շնորհը, օժտում նրան հոգու աչքով, որ է՝ աստվածային իմաստություններն ընկալող մարդկային միտքը։ Մարդը սատանայի դրդմամբ գայթակղում է արգելված պտղով։ Աստված, արձակելով մարդուն դրախտից, այնուհաներձ, հնարավորություն է տալիս նրան վերականգնելու իր ճախամեղսական վիճակը։

²⁴ Նոյն գլուխում, լ.ջ 140:

²⁵ Նոյն գլուխում, լ.ջ 134:

²⁶ Նոյն գլուխում, լ.ջ 144:

Բանականությունը թող առաջնորդի մարդուն դեպի լուսը, խոտորվելու դեպքում պարզէի նրան արթնացումի պահը: Երկրի վրա այնպես՝ հոգու գերակայությամբ ապրողները վերըստին կարծանան դրախտում ապրելու շնորհին, իսկ չարով գայթակղվածները նմատնվեն կրոստյան:

թէ որ կարողքն եմ՝ տանիցին,
Եւ որք տըկարք՝ ոչ պահանջին²⁷:

Իմաստավորվում է երկրի վրա մարդու ապրած կյանքը՝ դառնալով անմահության հասմելու ձգուում: Մարդը, հանուն այդ բարձրագույն նպատակի անխոտոր ապրելով, նիստարարի մահվան, դժիսքի սարսափը.

Ու՞ր, ասէ, մահ, քո յաղթութիւն,
Կամ ու՞ր, որժոնքը, խայլոց քոյիւն²⁸:

Հիսուսի ծնունդը, կյանքը և մահը լավագույն հիմնավորումն են Ծնորհալու այդ մտացության: Հիսուսը խոստանում է մարդուն շնորհել հոգեոր ըմպելիքը, անա թե ինչու բառատեղծը Նրան անվանում է «Առջիկ Կենաց» (Էջ 102): Տաղերից մեկում Ծնորհալին գրում է:

Նորահրաշ արեգակն այսաւ ծագեցաւ աշխարհի
ի գրոյ խաւարէ,
Եւ կեամբ անվախճան տըւաւ մահացու բընութեան
ի սոսուերաց մահու²⁹:

Սա է Հիսուսի առաքելության խորհուրդը: Մարդու մարմին է և հոգի, երկրային է և աստվածային: Աստված կամենում է, որ մարդու բացահայտի իր մեջ աստվածայինը, դառնա աստված: Հիսուսը ճնշում է՝ մարդու մեջ հոգևոր սկիզբը լուսավորելու համար: Աստծու կարևորագույն ստորոգելիներից է փրկագործելու կարողությունը: Ի տարբերություն Հին Կտակարանի մարգարեների, որոնք «Դեղով բանից» չկարողացան բուժել տկար մարմին ունեցողներին, Հիսուսը Փրկիչ է կոչում չհակադրվելով, սակայն, մարգարեներին, ինչպես որ Ավետարանում է ասվում. «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել օրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ՝ լուզ» (Մատթեոս Ե 17): Հատ Ծնորհալու՝ հզոր ցավը հզոր դեղի կարիք ունի.

²⁷ Առանձ տեսողում, լ.9 116:

²⁸ Առյան բոեղում, էջ 72:

²⁹ ՆԱԽԱԲ ՇԱՀՈՐԻԱԿԻ. Տաղեր և զանձոր, աշխարհասիրությամբ Կրմինն Քլոշկերյանի, Երևան, 1987, լ. 117:

*Զի ըստ հրզօր ցաւոց վիրիհ
Հրզօր դեղոց պիտանայիմ^{30:}*

Հիսուսը հաստատում է Նոր Օրենքը, ապա պահանջում ավելի արդար լինել, քան օրենսգետները.

*Պահանջեցեր ըզկմի նորիհ
Առաւելով յարդար մասիհ,
Բան ըզդպրաց Հին Օրիմիհ,
Զաշակերտացըն Մովսիսիհ^{31:}*

Հիսուսը չի լքում մարդում՝ չնայած վերջինիս անարժան լինելուն:

Քերթվածում արծարծվում է մարդու ապերախտության գաղափարը: Աստված ազատում է խարայելցիներին և գիտացիների բռնությունից, ճանապարհ բացում անապատում նրանց համար, կերպարում երկնային հացով, սակայն իսրայելցիներն անարգում են Աստծուն իրենց կուռապաշտությամբ: Երկի քնարական հերոսը, համեմատելով իրեն նրանց հետ, խոստովանում է, որ ինքն առավել ապերախտ է նրանցից, որովհետև Աստված իր համար ավելին է արել, քան նրանց համար (Էջ 42):

Մարդը ինքնակամ մատնվում է ավազակին, և, այնուհանդերձ, Աստված երես չի թեքում նրանցից:

Ընորհալու Հիսուսը տոգորված է մարդկային կյանքի ողբերգության զգացողությամբ: Նա նոյնան դրամատիկ կերպար է, որքան քերթվածի հերոսը: Մարդուն ոտքից գլուխ համակած ցավը, որը նրան անհնարին տանջանքների է ենթարկում, կարծես հաղորդվում է Հիսուսին: Նա տառապում է մարդու հետ և տառապում է մարդու համար: Նրան մտահոգում է մարդու ճակատագիրը: Հերոսի՝ Հիսուսին ուղղված խոսքերում կարծես հանդիմանություն է հնչում, թե ինչու է Աստված մարդուն կամքի ազատություն շնորհել, եթե մարդը հնազանդ չէ նրան.

*Զիշխանական կամս իշխողիհ
Բարձ, որ Քոյումդ ո՛չ հնազանդիհ^{32:}*

Աստված, լինելով «կարող յամենայմին» (Էջ 112), և «հնար անհնարից» (Էջ 108), մի՞տե չէր կարող մարդուն ստեղծել քաջ ու զորեղ կամ ել թույլ չտար փորձողին փորձել ծովլին՝ իրեն քաջի: Այդ տկար էակին պակասում է Աստծու զորեղ ձեռքը, որ նրան համի մեղքի ծովից, ինչպես այն ժամանակ խեղդվող Պետրոսին, պակասում է աստվածային սերն ու զերմությունը, որ ինքն էլ սիրով լցվի:

³⁰ «Հիսուս Որդի», Էջ 80:

³¹ Նոյն փեղում, Էջ 88:

³² Նոյն փեղում, Էջ 132:

Հեղեր յերկիր զմուրդ երկնային,
Որով մարդկան հոգիք մաքրին,
Բորբոքեցն՝ յանձն իմ ցըրտին,
Զհոգիս չեռո՛ սիրով ՔոյիմՅ:

Միայն Աստված կարող է վերջ դնել մարդու ցավի պատճառին, նրան հաստատել անշարժ վեմին, որ տուած ավագութի վրա չկառուցի:

Ծնորհալին գծում է Հիսուսի անցած ճանապարհը ծննդից մինչև մահ: Հիսուսի կենսագրությունը հյուսվում է Աստծու և մարդու հակադրության բացահայտումով. մարդն իր բարյական նկարագրով աստվածային մուակերտվածքի հակապատկերն է: Աստված վեր է, արդար, անաղարտ, մարդը՝ ցածր ու ստոր, ամենից վերջինը՝ հման ուրքի գարշապարին: Աստված երկնային անապական աղ է, մարդը՝ անհամ, Աստված լուս է, մարդը՝ խավար անգիտության և կույր, Աստված բարու սերմանողն է, մարդը՝ անպոտու բարու համար:

Ծնորհալին մարդու բարոյական անկման պատճառը բացատրում է դեպի չարը նրա հակվածությամբ: Քերթվածի հերոսը բազմիցս է խոստովանում իր՝ բարուց զուրկ լինելը.

**Եւ եւ կըրտսերս առ ի բարին
Եւ կատարեալ գոլ ի չարիմ³³:**

**Չեմ արժանի նայիլ յերկին,
Չի կափուցի զաշս ի բարիմ³⁴:**

Կարևորելով բարու և չարի խնդիրը՝ Ծնորհալին փորձում է բացահայտել չարի ակունքը.

**Թէ արտաքոյ է բնականին,
Զոր շնորհեցեր բանականին.
Այլ զի պատճառ է ինձ չարին
Ի թուղութեան թշշուառ անձին³⁵:**

Այսինքն՝ չար է այն, ինչ դուրս է բնականից, որ շնորհել է Աստված բանական էակին: Թվարկելով բոլոր այն մեղքերը, որոնք գործող ենթարկվում են Աստծու պատժին՝ Ծնորհալին նույն ոգով էլ բանաձևում է բարին: Վերջին դատաստանի օրը լուրաքանչյուրն իր կատարած բարին՝ իրեն ծաղիկ, կընծայի Աստծուն. մեկը՝ ամրությունը պահքի, կերակրի և լեզվի չափը, մյուսը՝ առատ տուրքը աղքատին, մեկը՝ պաղ չոի բաժինը, մյուսը՝ ուրախության խինդի, մեկը՝ այցը հիվանդին, բանտարկյալի խնամքը, մյուսը՝ մերկին հազուստ ու տնամկին պատսպարան տալը, մեկը՝ որբերի հայրությունն ու գթությունն առ այրին,

³³ Նոյն փեղում, լ. 2 126:

³⁴ Նոյն փեղում, լ. 2 30:

³⁵ Նոյն փեղում, լ. 2 62:

³⁶ Նոյն փեղում, լ. 2 132:

Մուսար՝ չարի դեմ իր զգայարակն փակելը, մենք՝ պարկեցաւ ամուսնությունը, մյուսը՝ ամրիծ ու կուս հոգին, մենք՝ մարմանի չարչարանքները կամ արյունը պանձալի, մյուսը՝ մերեղու և թշնամուն լավություն անելու կարողությունը: Բարիք է գործում այն մարդը, ով ապրում է ըստ Աստծու պատվիրանների, ով արածի դիմաց չի ակնկալում որևէ վարձատրություն:

Հիսուսի գործերի վերապատմումը նպատակառության մասնակի բարոյական մկանագի անաղարտության գաղտնիքը բացահայտելուն: Հիսուսը բարոյական կատարելության մարմնացում է, որովհետև երբեմ չի զայթակղվում չարով, չի խախտում Աստծու պատվիրանները: Հիսուսը ծնվում է մարդուն հոգեւոր նեցուկ լինելու, բարձրանում է սուրբ խաչը՝ վեր առնելու «զյանցանը մարդկային», սակայն նրա կյանքը շատ ավելի իմաստավորված է: այն ուղեցուց է բարոյական ինքնակատարելագործման ձգտող մարդու համար, թե ինչպես վերջինս պետք է ապրի իր համար նախասահմանված երկրային կյանքը, որ հասնի աստվածային բարձունքին: Այն, որ Հիսուսը ցանկանում է մարդուն տեսնել այնպիսին, ինչպիսին ինքն է, դրա վկայություններն են բանաստեղծի կողմից իրեն՝ Հիսուսին տրված բնութագրումներն ու Հիսուսի՝ աշակերտներին ուղղված պատվիրանների համադրությունը: Հիսուսը աշակերտներին պատվիրում է լինել երկրի աղը, Ծնորհալին Նրան անվանում է երկնային անապական աղ, Հիսուսը նրանց պատվիրում է լինել աշխարհի լուսը, Ծնորհալին Նրան դիմում է «Լոյս ի լուսոյ Հօր միածին» բառերով: Հիսուսը պատվիրում է գանձ չժողովել, Ծնորհալին նրան կոչում է երկնային գանձ («ԸգՔենզ, որ գանձն ես երկնային»):

Հիսուսը մատնանշում է այն ուղին, որը տանում է դեպի Աստված՝ աղոթքը և սերը: Հայրությունը, մատնությունը, Շնորհությունը, խարեւությունը, ոժգործությունը, մագթությունը, կեղծավորությունը և այլ արատներ ծնվում են մարդու հոգում սիրո բացակայությունից /«Ոչ սիրեցի ըգթշշնամին /ու ոչ ցուցի գութ ասողոյն» (Էջ 96), սեփական թերությունների անտեսումից /«Ոչ ճըկատեմ իսս գերանին, /Մրատես լինիմ յայլում շիտին» (Էջ 100): Հիսուսը սեր էր քարոզում ձգտելով երկրի վրա հաստատել սիրո կեցությունը: Նրա երկրային կյանքը հիացնում է իր մարդկայնությամբ: Նա քառովն է մարդկանց եղբոր մեղքը ներել ոչ թե 7 անգամ, այլ «չորս հարիւր ընդ իննունին», ինքն էլ անձրևի ցողն ու արևի լուսը հավասար է բաշխում ապաշնորհ չարերին և բարիով լի արդարներին:

Ծնորհալին քերթվածում առկոչում է բազում սրբերի ու զահատակների, որոնք, ցուցաբերելով մեծ կամք ու տոկունություն, իրենց հոգեկան աշխարհը ստորադասելով Աստծուն, կարողացել են դիմակայել չարի փորձություններին, հայթահարել մարդկային բնության տկարությունը: Մինչեւ երկի հերոսը փորձել է ծառայել երկու տիրոջ, այդ իսկ պատճառով ծովացել է թե՛ երկրի, թե՛ երկնի հարցում: Երկի էջերում բազմիցս հնչում է սեփական անձի կշտամբանքը: Ահա, օրինակ, հիշելով Պողոս առաքյալի խոսքերը Ավետարանը քարոզողների մասին (Ա. Կորնել. Թ՛ 16-17): Ծնորհալին գրում է, որ մարդիկ տնտեսներ են կարգված Աստծոց, ոմանք՝ Շոյթական գյերի, ոմանք՝ «աննիթ պարզեալ բանին»: Իրեն վիճակվել է տնտես լինել Աստծու տաճ վրա: Բանաստեղծն ակնարկում է իր հոգևորական լինելը: Մինչեւ աստվածային խոսքը բաշխելու, ժամասացության ժամանակ կենաց հացի կերակրու տաճու փոխարեն սովամանի է թողել մարդկանց: Համոզված լինելով, որ կգա այն օրը, երբ կմերկանա ներքին մարդը և կծանակի, Ծնորհալին հայտարարում է, որ իրականում ինքն այնպիսին չէ, ինչպիսին կարծում են մարդիկ. երանելի ու բարի է կոչում, երբ չար է, լուս է համարվում, երբ գործերն են խավար (Էջ 202, 204):

Մտեղծագործության հիշատակարանում ևս, գովերգելով եղբորը՝ Գրիգորին, բամաս-
տեղծը թերազնահատում, նսեմացնում է իրեն, որովհետև մարմնով մոտ է եղել, բայց հո-
գով՝ բացակա, չի հետևել ոչ՝ հարազատների, ոչ՝ ել ուրիշների իրատներին, լուսավորիչ ու
քժիշն է կոչվել, բայց հայ է թաղվել մժմում ու լցվել մեղքով (Էջ 216, 218): Եվ իմա իր
հանցանքները հորդ արցունքներով լվանալով, աղոթքով, Աստվածածնի և սուրբ Վկաների
բարեխսությամբ, մարտիրոսների չարչարանքներն ու թափած արյունը վկայակոչելով
միայն կարող է հուսալ ողորմածությունը Հիսուսի, որ նաև ամեն դատավոր է:

Համաձայն աստվածաշնչային ըմբռնմանը, որ մարդու բանականությունն ազատ է չա-
րի և բարու ընտրության հարցում, Ծնորհալին եզրակացնում է, որ մարդը, այնուամենայ-
նիվ, պետք է խելամտություն դրանորի. երկնքում տեղ չունեն ո՛չ իրենց լապտերները ձեր
լցնելու մասին հախորդ չմտածող հիմարները, ո՛չ ել հարթեցողները, որովհետև, ըստ
Ծնորհալու, անուշ գիմին հիմարության առաջնորդն է: Ավելի լավ է հիմաստությունն ուղե-
կից դարձնելով՝ օգուտ քաղել ժամանակից, քան թե վերջին դատաստանը հիշելով՝ հոգե-
պես դժոխային տաճանքներ ապրել պատեղ՝ երկոր վրա:

Երևակայության հզոր թափու Ծնորհալին գծում է Վերջին դատաստանի տեսարանը:
Դողրում են տարեցները, աշխարհը սասանվում է, ինչպես ալեկոծված ծով, լեռները
բախվում են իրար, կարծը քարեղը հալվում են, հյուսեղը՝ հրդեհվում, հորդում են գետերը,
շրիենեղի պես ծավալվում, հողեղեն մարմնները բոցավառվում են տերևների պես, լեռ-
ները հալվում են, ծովի ալիքները՝ ցամաքում: Կեսզիշերին հնչում է Գարրիել հրեշտակա-
պետի փողը՝ հոգիներին ազդարարելով Ամեն դատաստանի գալուստը: Բոլորը՝ իշխան թե
թագավոր, դատավոր թե վաճառական, աղքատ թե հարուստ, սղանալու են իրենց հա-
տուցումը: Գողը, մարդասպանը, պոռնիկը, խարերան այրվելու են գերենի բոցերի մեջ:

Ծնորհալին հետամոռ է մարդու բարոյական վերափոխման, այս կյանքում աստվա-
ծային ուղիղ վարքով ապրելու դաստիարակչական պատակ: Այս առումով նա կարևո-
րում է Սուրբ Գրքի դերն ու Աշամակությունը մարդու կյանքում: Բանաստեղծը պատվիրում
է մարդկանց միշտ լսել Աստծու խոսքերը, «Որք են սեղան իմանալի / Խմաստութեան
կենաց հացին» (Էջ 154): Ծնորհալին չափած է գրել, որ ընթերցողը չձանձրանա, կարու,
նաև անգիր սովորի:

Ծնորհալին հավատում է մարդու բարոյական վերածնությանը: Մարդուն համարելով
Աստծու արարչագործության ամենակատարյալ արտահայլտությունը՝ նա գտնում է, որ
մարդը պետք է ապրի այնպես, որ շարունակ բարձրանա դեպի Աստված և ոչ թե սուկու-
մով խոստովանի, թե՝

*Ի յիշատակ թողում յետին
Զհամբաւ չարեաց զպարսաւ անձիւ³⁷:*

Ծնորհալու «Յիսուս Որդի»-ն համամարդկային արժեք ունեցող ստեղծագործություն է:

³⁷ Նույն գլուխում, Էջ 60: